

յապետք արդէն շատ կանուխ ժամանակներէ վեր կը ջանային զՀայս լատին եկեղեցւոյ դարձընել, եւ այն՝ ձեռնտուութեամբ հայ թագաւորաց, որոնց օգնութիւն կը խոստանային ընդդէմ թշնամեաց, եւ պարգեւ ու թագաւորական զարդեր կը յղէին. այսպէս՝ Իննովկենտիոս Գ. Քահանայապետն 1189ին Հայոց Լեւոն Բ թագաւորին թագաւորական զարդեր եւ թագ յղեց, յորդորելով զինքն թղթով մը՝ որ Առաքելական Աթոռոյ հաւատարիմ մնայ միշտ:

Նոյնպէս ջանացին Հռոմայ Քահանայապետք հայ Աթողիկոսներու թագ եւ պարգեւներ զըրկելով՝ զՀայս ի միութիւն ընդ Հռոմայ շահելու<sup>36</sup>:

Հռոմայ Քահանայապետաց միութեան այս ջանքերն եւ երկրին նշանաւոր խնդիրներուն եւ նոյն իսկ յաջորդութեան կռիւններուն մէջ խառնուիլն, որոնց մէջ սովորաբար հզօրագունին կողմը կը բռնէին, եւ ի փոխարէն լատին եկեղեցւոյ հետ միութիւն կը պահանջէին, մեծ եւ երկրին համար փնասակար խռովութիւններ, արիւնային պատերազմեր եւ մինչեւ արքայասպանութիւն յառաջ բերին, եւ վերջապէս առաջնորդեցին փոքր-հայկական կամ Արիկեան թագաւորութեան կործանման յամին 1378<sup>37</sup>: Եգիպտացի Մամլուքներն այս պետութեան ինքնօրինութեան վերջ տուին, այնպէս որ վերջին հայ թագաւորն Լեւոն Զ Լուսինեան ընտանիքէն, Գաղղիա փախաւ իւր թշնամեաց դէմ ի զուր օգնութիւն խնդրելու, ուր եւ 1393 Նոյ. 19ին մեռաւ ի